ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ԼԵՒՈՆ ԱՐՔԱՅՆ ՀԱՅՈՑ» ՆԱՄԱԿԸ

ԳՐ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Լամբրոնացին ԺԲ դարի պայծառ դեմքերից է։ Եղել է լայնախոհ, առաջադեմ մտածող, խոշոր հրապարակախոս-պերճաբան և Կիլիկիայի Ռուբինյան պետության ու կաթողիկոսարանի եռանդուն գործիչներից մեկը։ Ծնվել է 1153 թ. Կիլիկիայի Լամբրոն բերդում։ Սովորել է Սկևռա, Ամանոսի լեռների և Հռոմկլայի բարձրագույն (վանական) դպրոցներում։ Տիրապետել է մի քանի լեզուների։ Եղել է Տարսոնի թեմի առաջնորդ և Սկևռա վանքի վանահայր, Գրիգոր Տղա կաթողիկոսի օգնականը և Լևոն Բ-ի ատենադպիրն ու թարգմանիչը։ Թողել է հարուստ գրական ժառանգություն։ Գրել է ճառեր, պերճախոսական և հրապարակախոսական մեծ ու փոքր գործեր, թղթեր, ներբողներ, տաղեր, շարականներ, բազմաթիվ մեկնություններ և կատարել է օրենքների թարգմանություններ։

Իր ամբողջ կյանքում, գործունեությամբ ու ստեղծագործություններով Ն. Լամբրոնացին քարոզել է լուսամիտ գաղափարներ՝ համերաշխություն, խաղաղություն, ազգամիջյան սեր և եղբայրություն՝ անկախ ազգից ու կրոնից։ Առաջադիմական հայացքների և համարձակության համար նա ենթարկվել է հալածանքների, բայց միշտ մնացել է անդրդվելի ու համարձակ։ Այս տեսակետից նրա ստեղծագործությունների մեջ ավելի աչքի է ընկնում Լևոն Բ-ին հասցեագրված վերոհիշյալ թուղթ-նամակը։ Այս թուղթը Լամբրոնացու բնութագիրն է և միաժամանակ Սանահնի ու Հաղբատի վանահայրերի գրած բողոքագրի պատասխանն ու հերքումը։ Գրիգոր Տուտեորդին և Դավիթ Քոբայրեցին այդ բողոքագրում մեղադրում էին Լամբրոնացուն, որ նա «լատինասէր» է, «շեղուել է հայ եկեղեցու ճիշտ ուղուց, հետևում է հույներին, լատիններին և այլն»։ Այս բողոքը առաջինը չէր։ Ձորագետցիները (սանահնեցիները և հաղբատցիները), այդպիսի մի բողոքագիր էլ մի քանի տարի առաջ գրել էին Գրիգոր Տղա կաթողիկոսի դեմ։

Սակայն այս վեճերն ու պայքարը միայն դավանաբանական կամ անձնական բնույթ չէին կրում, ինչպես կարծում են որոշ բանասերներ և պատմաբաններ։ Այդ տարաձայնությունները հասարակական-քաղաքական հիմք ունեցող, արևմտյան և արևելյան կողմնորոշման պայքար էր՝ ձևով կրոնական, բայց ըստ էության հակամարտություն՝ երկու կուսակցությունների միջև, որոնցից մեկը գլխավորում էին հյուսիսային Հայաստանի նշանավոր հայրերը՝ Տուտեորդին և Քոբայրեցին, իսկ մյուսը՝ Կիլիկիայում՝ Գրիգոր Տղան և Լամբրոնացին։ Այս պայքարը նոր երևույթ էր, որը հետզհետե սրվում և խորանում էր։

Սկսած Գր. Վկայասերի և Բարսեղ Անեցու ժամանակներից, Կիլիկիայի և Հյուսիսային Հայաստանի հոգևոր հայրերի միջև միշտ էլ եղել է բարեկամական և գրական սերտ կապ։ Հիշենք Վկայասեր կաթողիկոսի գրական, վկայաբանական կապերը Բարսեղ Անեցու հետ. Ներսես Շնորհալու բարեկամական և մշակութային սերտ կապերը հենց իրենց՝ Սանահնի և Հաղբատի գիտնական վարդապետների հետ և այլն։ Կիլիկիայի և Մեծ Հայքի հոգևորականների համագործակցությունը՝ սկսած XI դ. վերջերից տևեց մինչև 1170-ական թվականները։ Սակայն ինչո՞ւ այդքան տևական, բարեկամական կապերն ու համագործակցությունը խախտվեցին և առաջ եկան նման վեճեր, որ Հաղբատի ու Սանահնի վանահայրերը բողոքագիր բողոքագրի ետևից գրում էին՝ Գրիգոր Տղա կաթողիկոսի և ապա Ներսես Լամբրոնացու դեմ։ Իհարկե, այդ պայքարը հանկարծակի չծնվեց։ Դա հետևանք էր Մեծ Հայքի և Կիլիկիայի հայ հատվածների սոցիալ-քաղաքական յուրահատուկ կեցության պայմանների։

Ձորագետցիները կամ Սանահնի և Հաղբատի վանքերը գտնվում էին Մեծ Հայքի հյուսիսային մասում։ Այստեղ ավատատիրական կյանքը, արևմուտքի համեմատությամբ, պահպանողական և

հետաքնաց էր։ Պարսկա-արաբական բռնակալական լուծը, սրանց գաղափարական խորթ ազդեցությունը և կրոնների հակամարտությունը երկար ժամանակ տվել էին իրենց բացասական հետևանքները։ Զորագետցի հոգևոր հայրերը, ազգային նկարագիրն ու մշակույթը անաղարտ պահելու նպատակով թշնամաբար էին վերաբերվում գրսից եկող ամեն մի ազդեցության ու նորության, դրանք համարելով վտանգավոր երևույթներ՝ հայ ժողովրդի և նրա դավանանքի համար։ Սակայն, այդպես չէին վարվում Կիլիկիայի հայերը։

Եվրոպական երկրների հետ ունեցած սերտ հարաբերությունները և խաչակիրների մուտքը Կիլիկիա, ազդել էին երկրի հասարակական կյանքի ու մշակույթի վրա։ Երևան էին գալիս նորաբակ մտածողներ ու գործիչներ, որոնք իրենց առաջավոր մտքերով վեր էին բարձրանում ֆեոդալական սահմանափակ աշխարհայացքից և տեսնում իրական կյանքն ու ժամանակի պահանջը։ Այդպիսի մի միջավայրում էր գործում Ներսես Լամբրոնացին։ Բացի այդ, Կիլիկիան շրջապատված էր խաչակիրների պետություններով և սելջուկ թուրքերով։ Ռուբինյանները և նրանց հետ համագործակցող հոգևորականները՝ Ներսես Շնորհալին, ապա Գրիգոր Տղան և այժմ էլ՝ Ներսես Լամբրոնացին Կիլիկիայի հայկական իշխանության ինքնուրույնությունը ապահովելու տեսակետից անխոհեմություն էին համարում հեռանալ ֆրանկներից, հույներից կամ Հռոմից՝ ինչպես պահանջում էին Զորագետցիները։ Այդ ժամանակ Կիլիկիայի հայության համար ստեղծված իրադրությունը նույնպես ծանր էր։ Մի կողմից սելջուկ ցեղերը Սիրիայում, Փոքր Ասիայում, բռնագրավում էին նորանոր գավառներ ու ամրոցներ, իսկ մյուս կողմից՝ խաչակիրներն էին առաջանում այդ երկրների խորքերը և վերջին հաշվով նույնպես սպառնում Կիլիկիայի անկախությանը։

Եթե հայերի, հույների և հռոմայեցիների միջև եղած վեճերը դավանաբանական բնույթ էին կրում, ապա թուրք ցեղերի նպատակն էր՝ նվաճել ամբողջ Կիլիկիան և ոչնչացնել հայկական պետությունն ու կրոնը։ Բնականաբար, Ռուբինյանները, նրանց հետ և Կիլիկիայի հոգևորականները, պիտի նախադասեին ստեղծել բարեկամական հարաբերություններ եվրոպական և շրջակա խաչակիրների պետությունների հետ, թեկուզ և դավանաբանական որոշ զիջումների գնով, որպեսզի կարողանային դիմադրել հարձակվող այլակրոն բարբարոսներին։ Ահա այսպիսի քաղաքական տարբեր կացության պատճառով Մեծ Հայքի և Կիլիկիայի հոգևորականների շրջանում առաջացել էին տարբեր հոսանքներ՝ գույնով կրոնական, բայց էությամբ՝ հասարակական-քաղաքական։

Ճիշտ չէ այն կարծիքը, որ իբր թե Տուտեորդու պայքարը զլխավորապես ուղղված է եղել Ներսես Լամբրոնացու անձի դեմ։ Այդ պայքարը մասամբ միայն կապված էր կաթողիկոսական ընտրություններ հետ։ Զորագետցիները առաջ էին քաշում Բարսեղ Անեցու և Գրիգոր Քարավեժի թեկնածությունը, որպեսզի Լամբրոնացին չընտրվեր կաթողիկոս, սակայն սրանով տակավին ամեն ինչ չէր վերջանում։ Դա ոչ թե անհատների նեղ, անձնական հաշիվների, այլ տարբեր կուսակցությունների պայքար էր, որին մասնակցել են և ուրիշ շատ հոգևորականներ[1]։

Լևոն թագավորին ուղղված թղթում Ներսես Լամբրոնացին ցույց է տալիս, որ Տուտեորդու գրած բողոքագրի բոլոր մեղադրանքներն անհիմն են։ Մի կողմից հերքում է մեղադրանքները, իսկ մյուս կողմից Լևոնին ուզում է համոզել, որ Զորագետցի վանահայրերը կյանքից ետ են մնացել, «տգետ» ու «ծույլ» են և իրենց կոչմանը անարժան։ Իսկ իր արժանիքներն ու անմեղությունը թագավորին ցույց տալու համար վկայակոչում է այն բոլոր դրական կարծիքները, որոնք այս կամ այն առիթով, տարբեր ժամանակներում, տարբեր մարդիկ, բանավոր կամ գրավոր արտահայտել են Կիլիկիայում, Մեծ Հայքում և եվրոպական երկրներում։

Այս պայքարը սուր բնույթ ստացավ Ներսես Շնորհալու մահից հետո (1173)։ Շնորհալու ժամանակ, մինչև 60-ական թվականների վերջերը, Կիլիկիայի հայկական պետությունը և եկեղեցին տակավին այն սերտ հարաբերությունները չունեին Արևմուտքի հետ, ինչ որ Լամբրոնացու ժամանակ՝ 80—90-ական թվականներին։ Գրիգոր Պահլավունին և Ներսես Շնորհալին իրենց հույսը երբեք չէին կտրում Մեծ Հայք վերադառնալու և կաթողիկոսարանը Անի քաղաքում հաստատելու մտքից։ Սակայն միջազգային դրությունն այնպես դասավորվեց, որ այդ բոլոր հույսերն ի դերև ելան, քաղաքական պայմանները աննպաստ էին հայկական միասնական պետություն վերականգնելու համար։ Ահա այս էր պատճառը, որ Կիլիկիայի հայոց արքունիքն ու տոհմը իրենց հայացքներն արևելքից կտրեցին և ուղղեցին դեպի արևմուտք՝ ազգային ինքնուրույն պետության գոյությունը ապահովելու նպատակով։ Կիլիկեցիների վարած այս քաղաքականությանն էր դեմ Գրիգոր Տուտեորդին, բայց որոշ նկատառումներով, մեղադրանքները բարդում էին

---

1 Ն. Շ ն ո ր հ ա լ ի. Թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871, էջ 308։

Ներսես Լամբրոնացու վրա, քանի որ արևմտյան կողմնորոշման գլխավոր ներկայացուցիչը նա էր՝ իր զորեղ գրչով, մեծ համբավով և ազդեցիկ լեզվով։ Զորագետցիները վարպետորեն կարողացան Լևոնին տրամադրել Լամբրոնացու դեմ։ Իրենց քաղաքական տեսակետները Կիլիկիայում անցկացնելու նպատակով, նրանք, ինչպես նշվեց, ձգտում էին հայրապետական գահի վրա դնել իրենց թեկնածուները, որպեսզի հանկարծ Լամբրոնացին կամ Գրիգոր Ապիրատը չընտրվեին կաթողիկոս։ Լևոն թագավորը, քաղաքական որոշ նկատառումներով, համաձայնվեց Տուտեորդու կուսակցության հետ և հայրապետական գահի վրա դրեց պատանի Գրիգոր Քարավեժին, որին դեմ էր Ներսես Լամբրոնացին։

Բայց մի տարի չանցած՝ Կոպիտառի ամրոցի աշտարակից գահավեժ վախճանվեց բանտարկված կաթողիկոսը։ Քարավեժից հետո կաթողիկոս ընտրվեց ծերունի Գրիգոր Ապիրատը, որին նույնպես դեմ էին հաղբատցիք։ Այս ընտրությունից հետո պայքարն ավելի բորբոքվեց։

Քարավեժի հանելուկային և ողբերգական մահը առիթ եղավ, որպեսզի ձորագետցիները պոռթկային Լամբրոնացու դեմ։ Ի՞նչ էին պահանջում ձորագետցիները։ Դժբախտաբար, Տուտեորդու բողոքագիրը մեզ չի հասել, սակայն Ներսես Լամբրոնացու թղթից երևում է, որ սրանք Լևոնից պահանջել են գլխավորապես երկու բան՝ արգելել Լամբրոնացու կատարած բարեկարգությունները և հեռացնել նրան արքունիքից։ Լևոնը վարանում էր։ Եթե նա ընդառաջ գնար վանահայրերին՝ զրկվելու էր պալատական մի ուժեղ գործչից ու խելոք խորհրդականից։ Լամբրոնացին տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների, ուներ համակողմանի զարգացում, կրակոտ լեզու, հուժկու գրիչ և անսպառ եռանդ։ Իսկ եթե Լևոնը չլսեր ձորագետցիներին, զրկվելու էր Արևելյան Հայաստանի նման ազգային մի մեծ հատվածից, որը քաղաքական ասպարեզում վճռական դեր կարող էր խաղալ Լևոնի ծրագրերը իրագործելու ճանապարհին։ Երկար խորհելուց հետո, նա համաձայնվեց Արևելյան հայերի հետ։

Լամբրոնացին վրդովված՝ բողոքում է, բայց թուղթը հասցեագրում է ոչ թե ձորագետցիներին, այլ Լևոնին, որովհետև վերջինս անսպասելի կերպով ընդառաջել էր ձորագետցիներին։ Լամբրոնացին փայլուն կերպով պաշտպանվում է և քննադատության է ենթարկում նաև Լևոնին՝ առանց նկատի առնելու նրա թագն ու դիրքը։ Նախքան թուղթը գրելը նա շատ ծանր ապրումներ է ունեցել. «Այս լռութեամբս կամ դադարեալ, և առ Աստուած խոսակցութեամբ պարապեալ, որոյ կամ առաջի մտաւոր հառաչմամբ, և անմռունչ հեծութեամբ, և միշտ արտասուաց հոսմամբ»[2]։

Ձորագետցիների և Լևոնի վարմունքն այն աստիճան ծանր է ազդել Լամբրոնացու վրա, որ այս եռանդուն գործիչն ու գրողը բարվոք է համարել մեռնել, քան թե ապրել։ Բողոքելով Լևոնի անարդար վարմունքի դեմ գրում է. «Ու մինչ ես յայս ընթացս և ի զբաղմունս կամ դեգերեալ, զելանելն և ընդ Քրիստոսի լինելն լաւ համարելով, և զկեալն ի մարմնի ոչ կարևոր, որովհետև ոչ եմ յօգուտ ձեր...»[3]։ Այստեղ նա ոչ միայն հերքում է իրեն վերագրվող մեղադրանքները, այլև խիստ հարձակվում է բողոքագրի հեղինակների և Լևոնի վրա, ցույց տալով նրանց միտումնավորությունը։ Թղթի սկզբում գրպարտությունների համար պատասխանատու է համարում նաև Լևոն թագավորին և հայտարարում, թե՝ «պատրաստ լերուք տալ պատասխանի հեզութեամբ ամենայնի՝ որ հարցանէ վասն յուսոյն որ է ի ձեզ»[4]։ Ապա ինքն էլ իր հերթին պատրաստակամություն է հայտնում՝ պատասխանելու նախանձից դրդված գրպարտիչներին։ «Ու մեք ի շնորհացն Աստուծոյ, որովք զօրացեալ եմք բանիւ, պատրաստ եմք պատասխանատուութեան, որք ի մեր բարիսս ընթացս դայթակղին ի տգիտութենէ և ի սնոտի համբաւոց»[5]։

Ուշագրավ է և այն հանգամանքը, որ նախքան վանահայրերի բողոքագիրը, Լամբրոնացին թագավորի հետ ունեցել է լուրջ տարաձայնություններ։ Լևոնը նրանից պահանջել է գրավոր բացատրություն։ Թեև Լամբրոնացին գրել է այդ բացատրությունը և հանձնել նրան, բայց այդ գրությունը նա նույնիսկ չի կարդացել և անուշադիր է թողել[6]. «Քանզի այլ անգամ եղև այս հարկս, և խնդրեցիր և մեզ բան՝ որ առ մեզ ուղղութեանս վկա. տուաք գրով սրբոց վկայութեամբ, որ զամենայն հակառակողս ի հաւանութիւն նուաճէր ի սիրելն զուղղութիւնն, և ծանր եղև ձեզ ընթեռ-

---

2 «Նամականի», Վենետիկ, 1865, էջ 212։
3 Նույն տեղում, էջ 215։
4 Նույն տեղում, էջ 207։
5 Նույն տեղում, էջ 207—208։
6 Նույն տեղում, էջ 210։

նույն, կամ այլոց զնոյն ցուցանել...»[7]։ Թե ինչ արդյունքի են հանգել Լևոնի և Լամբրոնացու տարաձայնությունները, հայտնի չէ, բայց Թղթից երևում է, որ Լևոնը նույնիսկ աղաչել է Լամբրոնացուն՝ իրեն համամիտ ու կողմնակից դարձնելու համար. «...Եւ դուք աղաչեցէք զմեզ վասն զնոցա գայթակղութիւնն շինելոյ, դառնալ ի մոլորմանէս, ապա թէ ոչ՝ գրկիմք ի պատուոյն, զոր մինչև ցայժմ ի ձէնջ եմք ընկալեալ»[8]։ Համարձակորեն հանդիմանում է Լևոնին, որ նա հետևողական և սկզբունքային չէ, այլ միշտ տատանվում է։ Այսպես՝ նա մեկ հավանություն է տվել Լամբրոնացու ընթացքին, գովել, հայտարարել, որ նա արժանի է նույնիսկ կաթողիկոսության, մեկ էլ անակընկալ՝ փոխել է իր կարծիքը, միացել ձորագետցիներին։

Նա Լևոնից պահանջում է գործի արդարադատ քննություն, զրպարտիչներին՝ պատիժ, իսկ իր իրավունքների՝ վերականգնում։ Հայտարարում է թագավորին, որ իրեն ո՛չ թե պալատական պաշտոնն է գրավում, այլ՝ ճշմարտությունը. «Որբ տեսաք զձեզ առ այն քննութիւնն և վրեժխնդրութիւնն տարտամ, ունիմք զլուծ խոնարհութեան և նստիմք լռութեամբ ի տանս։ Ձեմք մուտ և ել ի ձեր արքունական ապարանս. և ոչ ի յոյզ և ի խնդիր հոգևոր ուղղութեանց կամ մարմնական ձրից»[9]։

Այս կապակցությամբ զգուշացնում է Լևոնին, որ գործի մեջ պետք է չհպարտանալ նաև տոհմական կամ ազնվական բարձր ծագումով. «Ոչ պարծեմք ձեր տոհմակցութեամբն, և ոչ մեր հայրենի պայազատութեամբն, ո՛չ գրով և ո՛չ բանիւ և ո՛չ քան զչափ մեր պատուույս ձգտեցաք, և ոչ ի վերայ ուրուք պատուոյ յարակցեցաք, ոչ ձիօք և ոչ ջորեօք յօրացաք և ո՛չ զքահանայութիւնս երկրորդ մարմնոյ աշխատութիւն արարաք, ո՛չ ի քաղաքս ձեր ձեռներեց եղաք, և ո՛չ զգործակալս ձեր հարստահարեցաք, զրկեցաք ի նոցանէ, և տարաք, զզուեցաք, և համբերեցաք. և ունկան ձեր ձանձրութիւն ոչ արարաք»[10]։

Լամբրոնացին գերադասում է ճշմարտության համար կրել զրկանք ու հալածանք, քան թե արքունիքի կողմից ցույց տրվող կեղծ, և ժամանակավոր պատիվը։ Նա գրում է. «Եւ պատրաստ եմ զանարգութիւնս՝ յայսմհետէ ընդունել ի ձէնջ, քան զոր մինչև յայս՝ զպատիւս»[11]։ Ապա ի՞նչ է ուզում Թղթի հեղինակը, ի՞նչ է բողոքի նպատակը։ Նա չի ձգտում ո՛չ բարձր պաշտոնի, ո՛չ փառքի ու պատվի՝ ո՛չ աշխարհիկ և ո՛չ էլ հոգևոր կյանքի ասպարեզներում։ Նա գոհություն է հայտնում Արարչին, որ իրեն շնորհել է իմաստություն ու տաղանդ, որոնք վեր են երկրային բոլոր փառքերից։ Իսկ այդ երկնային շնորհները ճանաչել, հասկանալ և արժեքավորել Լևոնն անկարող է[12]։ Նրա նպատակն է բարի անուն ձեռք բերել թեկուզև դժվարությամբ և հալածանքներով. «Այն փառացն և տանն վայելչութեան տոփանօքն զբաղեալ իմ աղքատութիւնս. թեթև ունիմ զՁորոյ գետոյ եղբարցն. և վարժապետացն անարգանքն, և զձեր փառքն։ Եւ ես լուսաւորեալ ի վայելչութիւնն՝ հեղում զարտասուս առաջի Աստուծոյ...»[13]։

Թղթի առաջին մասը եզրափակվում է նրանով, որ Լամբրոնացին բնավ չի շեղվել գործունեության ճիշտ ընթացքից և հաստատ ու անդրդում կմնա իր համոզմունքների մեջ՝ անգամ դատարանի ատյանում։ Հայտարարում է, որ իրեն չեն կարող ահաբեկել ո՛չ զրպարտությունները, ո՛չ հալածանքները, և ո՛չ էլ նույնիսկ մահվան սպառնալիքները։ «Իսկ այժմ զի կոչեք զիս առաջի դատել, պատրաստ եմ ի պատասխանելն։ Ո՞յք են ոսոխքն, եկեսցեն, հանդիման լիցին, ասասցեն և լուիցեն։ Ապա թէ առանց քննելոյ փոքրացուցանէք զիմ բարեկարգութիւնս և իբր զանօգուտ իրս տայք արհամարհել զուղիղն, և զճմշարիտն իբր զանպիտան, և զմեծն որպես զփոքր, և զճշմարիտն որպէս զսուտ, ոչ հաւանիմ. և ի սորին ճշմարտութեան՝ նախատիմ և մեռանիմ...»[14]։

Թղթի երկրորդ մասում քննվում են ձորագետցիների հիմնական մեղադրանքները և ցույց տրվում, որ դրանք անհիմն հերյուրանքներ են։ Ձորագետցիները Լևոնին գրել են, որ հայոց եկեղեցում պատարագի զգեստները սկսած Գրիգոր Լուսավորչի ժամանակներից մինչև Գրիգոր Տղան, եղել են պարզ ու հասարակ, իսկ Լամբրոնացին զանց առնելով «հարց կարգերը», դրանք ճոխացրել, գեղեցկացրել և պայծառացրել է։

7 Նույն տեղում, էջ 210։
8 Նույն տեղում, էջ 214։
9 Նույն տեղում, էջ 210։
10 Նույն տեղում, էջ 210—211։
11 Նույն տեղում, էջ 214։
12 Նույն տեղում, էջ 211։
13 Նույն տեղում, էջ 212։
14 Նույն տեղում, էջ 215—216։

Այս մեղադրանքներն էլ հերքելով՝ Լամբրոնացին Լևոնին զգուշացնում է, թե «նոքա ստութեամբն կարէն զքո պարզամտութիւնդ երկեցուցանել. և ես ճշմարտութեամբս ոչ թէ կամէի այս իմ գլխաւորիս քարշանքն, որ զՔրիստոսի պատարագն բարեզգեստութեամբս հրապարակատես առնեմ...»[15]։ Լամբրոնացու կարծիքով՝ Տուտեորդին, որպեսզի կարողանա Լևոնին տրամադրել իր դեմ, այդ հերյուրանքներին տալիս է ազգային-եկեղեցական բնույթ։ Ահա թե ինչու սաստիկ զայրացել է նա և լռելը համարում է հիմարություն. «Եւ չեմ ես յիմարացեալ որ լռեմ... ծառն ի պտղոյն ճանաչի... և զԱննեցւոյցն պտուղն դուք էք լսեր, և զՁորագետոյն, և որ անդ Տուտեորդին և Բոքարեցին, և այլքն իւրեանց տեսողք։ Չի Տուտեորդին յանարգութենէ առաջ եկեալ լեզուագարելովն՝ փառս որսայ առ ի մարդկանէ, և զփառս Աստուծոյ ոչ գիտէ. ուտելով և ըմպելով ընդ աշխարհականս դպրութն պարարել, և զեկեղեցւոյ դուռն թէ ընդ ո՞ր է՝ բնաւ չգիտէ... Որ առ մեզ ձգտի յուսուցանել...»[16]։

Թղթի այս մասում երևում է, որ ձորագետցիների և Լամբրոնացու միջև տարաձայնությունները սրվել են նաև այն պատճառով, որ Գրիգոր Քարավեժի կաթողիկոս ընտրվելուն Ներսես Լամբրոնացին դեմ է եղել։ Երևում է նաև, որ Լևոնը մի քանի անգամ կանչել է Լամբրոնացուն և համոզել, որ նա գա և մասնակցի Քարավեժին կաթողիկոս օծելու ծիսակատարությանը, բայց նա հրաժարվել է։ Մի քանի անգամ կանչելուց և ստիպելուց հետո, Լամբրոնացին ակամայից կատարել է թագավորի պահանջը. «Սոցա ոչ կամեցաք խօսակից լինել գրով, և ոչ... քանիւ ի տեառն մերոյ Գրիգորի աւուրսն, յորում նովին կարգաւս երեկի լաւ բնաւիցն. և ես առաւելապես մինչև ձեր աստուածապաշտութիւնդ կոչեաց զմեզ ի մանուկ կաթողիկոսին ձեռնադրելն. յետ այնր արտաքոյ հանիք յաթոռոյն և կոչեցիք ի քննել։ Հրաժարեցաք, մի և երկիցս, և երիցս, և չորիցս, և հնգիցս զիր հրամանի ձեր զմեզ բռնադատեաց։ Եկաք, և զոր ինչ արարիք յայն ժողովն՝ համաձայնեցաք»[17]։

Մեծ Հայքի և Կիլիկիայի հոգևորականների միջև եղած այս պայքարը գլխավորողները երբեմն դրան տալիս էին նեղ, անձնական բնույթ՝ իրար վիրավորելով և անվայել խոսքեր նետելով։ Ըստ թղթի, այդ մոմենտը երևում է թե՛ ձորագետցիների, և թե՛ Ներսես Լամբրոնացու մոտ։ Վերջինս փոխանակ հանգամանորեն և սառնասիրտ բացատրելու, թե ինչու ձորագետցիները ուզում էին հայոց հայրապետական գահի վրա դնել Քարավեժին, ինչու էին խուսափում արևմուտքի եկեղեցու և քաղաքական ազդեցություններից, շեշտը դնում է անհատների անձնական թերությունների վրա։

Լամբրոնացու կարծիքով ձորագետցիներն ուզում էին կաթողիկոս ընտրվեր Գրիգոր Քարավեժը գլխավորապես նրա համար, որ «...նովաւ անվրդով կալ ի զինըմպութիւնն, և յորովայնապարարութիւնն, և յայլ չարիսն, որոց միջի ճախրէն և ընդ կարճոտեալն մաղկատեալ, անտես արարին զաստուածահաստատ իշխողիդ գիր, և զսուրբ ժողովոյ եպիսկոպոսացն՝ որ ընդ քեզ, և զարժանաւոր եպիսկոպոսին հրեշտակութիւնն...»[18]։ Որպեսզի ազդի Լևոնի վրա և ցույց տա իր կողմնակիցների բազմությունն և ուժը, ապա՝ ձորագետցիների թուլությունը, Լամբրոնացին բերում է բազմաթիվ փաստեր, թե ինքը որքան մեծ համակրանք և համախոհներ ունի Կիլիկիայում, Մեծ Հայքում և ասիական ու եվրոպական երկրներում[19]։

Հաստատ համոզված լինելով, որ իր բերած փաստերը հիմնավոր են, Լամբրոնացին հարց է տալիս Լևոնին. թե արդյոք անհարմար չէ՞ մի թագավորի համար, աչքաթող անել վերոհիշյալ բազմաթիվ փաստերը, իր գործերը, որոնք միասին են կատարել արքունիքում և արքունիքից դուրս։ Չտեսնել այդ ամենը, այլ միայն ունկնդրել, ձորագետցի երկու վանահայրերին՝ մեծ հանցանք է։ Այդ վանահայրերը բնութագրված են հետևյալ, անշուշտ, խիստ և անվայել խոսքերով. «Արդ զայս ամենայն որ ի Հայոց և յայլոց ազգաց՝ և ի մտաց խղճէ բարի վկայութիւն անտե՞ս առնեմ, և ի Ձորոյգետ ղերկուց արանց, որք իբրև գշունս լիրբս հաչեն զկա՞մս հաճեմ. որք վասն զԱննեցի արբեալն ի դուսանաց և յորովայնամոլութենէ, յարբեցութենէ, և ի կաթողիկոսութիւն քարշելոյ՝ զմեզ նախատեն, և նմա վկայութիւն տան, և մեզ այպանումն»[20]։ Ապա համարձակ տոնով հայտարարում է թագավորին, որ անիրավացի են և՛ հաղբատցիները, և՛ Լևոնը, քանի որ ինքը ոչ միայն չի խոտորվել հայկական եկեղեցու և հայ ժողովրդի ընդհանուր շահերի ճիշտ ճանապար-

15 Նույն տեղում, էջ 219։
16 Նույն տեղում, էջ 223։
17 Նույն տեղում, էջ 224։
18 Նույն տեղում, էջ 227։
19 Նույն տեղում, էջ 229—231։
20 Նույն տեղում, էջ 232։

հից. այլև վերականգնել. հարություն է տվել հին դարերում գոյություն ունեցած ծեսերին, արարողություններին և սովորություններին։ Իսկ նրանք, ովքեր այս ամենի հիշտ, ազգային նշանակությունը չեն հասկանում և համարում են զիջում՝ հույն կամ լատին եկեղեցուն, դրանք հեացած մտքերով. հետամնաց մարդիկ են, որոնց դեմ ինքը միշտ պիտի մարտնչի[21]։ Բայց պիտի ասել, որ չափը անցած՝ անվայել խոսքերով ձորագետցիներին ու Լևոնին քննադատելու. հախուռն բռնկումների պահերին անդամ, Համբրոնացին դրսևորվում է որպես լայնախոհ, ներողամիտ և մարդասեր Հարտասան։ Ինչպես իր «Ատենաբանութեան» մեջ, այնպես էլ այստեղ. նրա գլխավոր դավանանքը՝ ճշմարտությունը, սերն ու մարդասիրությունն է։ «...Սէրն է ի գլուխ ամենայն պատուիրանաց... Յայսմ ծանիցեն ամենեքեան զձեզ իմ զոլ աշակերտ, եթէ սիրիցէք զմիմեանս։ Այսմ օրինացս դրժողք ոչ կարեմք լինել, և ընդ քրիստոնեից ժողովս մախանօք կալ, և զՁորագետեացեացն զմիտսն հաճել...»[22]։

Թեպետ Տուտեորդին և իր համախոհները անտեղի մեղադրանքներ են բարդել նրա վրա, բայց Համբրոնացին, լցված անհիշաչարության, մեծահոգության և մարդասիրական զգացումներով՝ հայտարարում է. «Այլ թեև ատիմք ի նոցանէ, ոչ ատեամք զնոսա, այլ փարիմք սիրով և զՀայաստանեօքս և զլատինացվոքն, զՀելլենացվոքն, և զամենեսեան մի գիտեմք ի Քրիստոս...»[23]։

Հերքելով մեղադրանքներից առաջինը, անցնում է երկրորդին։ Ձորագետցիները զրել էին, որ Համբրոնացին «այլաշավան» է և ոչ թե ազգասեր, որ նա անխտիր հարաբերություն ունի քրիստոնյա բոլոր ազգերի հետ՝ անկախ նրանց դավանանքից ու ծիսակատարություններից. ամեն ինչում ընդօրինակում է հույներին, լատիններին և այլն։ Համբրոնացին այս մեղադրանքն էլ է համարում անհիմն։ Բազմաթիվ փաստերով ապացուցում է, որ Սանահնի և Հաղբատի վանահայրերի գրածները ամբողջովին սխալ են, քանի որ թեև աշխարհի բոլոր ազգերը իրարից տարբերվում են լեզվով, դավանանքով, սովորություններով և ազգագրական այլ առանձնահատկություններով, սակայն այդ տարբերությունները բնավ չեն խանգարում, որ տարբեր ազգերն իրար հետ ունենան բարեկամական հարաբերություն, փոխադարձ հարգանք և եղբայրական կապ։ Ապա նա Լևոնին ցույց է տալիս, որ բողոքագրի հեղինակները տգետ ու ծույլ են։ Նրանց մեջ խոսում է նախանձը, նեղ անձնականը։

Հեգնող ու պատկերավոր եղանակներով իր հակառակորդներին մերկացնելուց հետո, դարձյալ խոսքն ուղղում է Լևոնին և եզրակացնում, որ ինքը այս խնդրում էլ չի սխալվել, չի թերագնահատել հայերին, չի հետևել ոչ մի ազգի սովորության, կամ դավանանքի, այլ ընդհակառակը, անշեղ հետևել է հայոց նշանավոր, հայրենասեր հայրերին ու հայրապետներին։ «Եւ յայս ոչ եմք օտար ի հարցն մերոց շաւղաց, այլ անստերիւր ընթացակից»[24]։

Մի անգամ, Տարսոնի եկեղեցում պատարագելիս Համբրոնացին ցանկացել է օրվա Ավետարանը կարդալ նաև հունարեն։ Մեծ տոների ժամանակ, արևմտյան եկեղեցիներում ընդունված է եղել՝ այլազգի ժամանակավորների համար էլ կարդալ հավուր պատշաճի Ավետարանը՝ նրանց մայրենի լեզվով։ Այդպիսի մի դեպք իսկապես եղել է Տարսոնի հայոց մայր եկեղեցում։ Մաղկազարդի տոնի օրը, երբ Տարսոնի եկեղեցում եղել են նաև շատ հույն ժամավորներ, Համբրոնացին նրանց հարգելու և օրվա ավետարանի իմաստը նրանց հասկանալի դարձնելու համար, հարցնում է հույն ժամավորներից, թե չե՞ն ցանկանում արդյոք, որ Ավետարանը հունարեն ևս կարդացվի։ Հույները շատ են հավանում Համբրոնացու առաջարկությանը, սակայն Ավետարանի հունարեն ընթերցումը չի կատարվում, որովհետև Լևոնը անմիջապես արգելում է, առարկելով, թե հայ առաքելական եկեղեցում ընդունված չէ ավետարանը կարդալ ուրիշ ազգերի լեզուներով։ Այս դեպքն էլ որպես այլասիրության փաստ, ձորագետցիները օգտագործել էին Լևոնին գրած բողոքագրում։ Այս առթիվ ևս Համբրոնացին Լևոնին խիստ քննադատում է. «Արդ այս Հելլենացոց ազգս ոչ թէ առ մեզ միայն ունին մուտ և ել ի սուրբ եկեղեցի, այլև ի ձեր արքունական ապտրանսն։ Դուք ընդէ՞ր ոչ վտարէք զնոսին ի ձեր դաւթացն իբրև զանսուրբ ազգ, և զօտարահաւատ, ըստ Ձորոյգետացեացն կամաց... Արդ, եթէ դուք զսիրոյն օրէնս պատուէք, զմեզ ատելութիւն ընդէ՞ր ստիպէք»[25]։ Թղթի այս մասում Համբրոնացին իր քննադատության սլաքներն ուղղում է

---

21 Նույն տեղում, էջ 233։

22 Նույն տեղում, էջ 234—235։

23 Նույն տեղում, էջ 235։

24 Նույն տեղում, էջ 221։

25 Նույն տեղում, էջ 237—238։

Լևոնի դեմ։ Ապա խորացնելով այդ քննադատությունը՝ Լևոնին տալիս է հետևյալ հարցերը. չէ՞ որ դու էլ մոտիկ հարաբերությունների մեջ ես հույների և լատինների հետ, նրանց օրինակով մի շարք բարեփոխություններ ես մտցրել Կիլիկիայի պալատական և պետական կյանքում, այդ ի՞նչպես եղավ, որ այդ բոլորի համար դու արդար ես, և իրավացի, իսկ ես՝ օտարահավան և մեղավոր։ Եթե այդպես է,— տրամաբանում է Լամբրոնացին,— ձորադետցիները ինչպես ինձ, այնպես էլ քեզ են մեղադրում, քանի որ քո հարաբերությունները այդ երկու ազգերի հետ ավելի լայն է ու գործնական, քան թե իմը. Հրաժարվի՛ր դու քո կատարած բարեփոխություններից, այն ժամանակ կհրաժարվեմ նաև ես իմ կատարած «հունասեր» և «լատինասեր» գործերից. «Դարձեալ և ի Լատինացւոց ազգէն՝ ոչ թէ զմեզ միայն խորշեցուցանեն Ձորոյգետացիքն, այլև զձեզ, և զկամին նոցա սովորութեամբն զվարեալն, այլ Պարսիցն, յորոց միջի իւրեանք են և ընտելութեամբն նոցա կրթեալ»[26]։

Եթե քեզ համար ետ դնալը դժվար է,— շարունակում է Լամբրոնացին,— սխալ կլինի քանդել կատարած գործը, չես ուզում հրաժարվել պետական և պալատական բնագավառներում քո կատարած բարեփոխումներից, ապա ինչո՞ւ ես ստիպում ինձ՝ հրաժարվել Հայ եկեղեցում իմ մտցրած մի քանի աննշան փոփոխություններից։ Այնուհետև բացատրում է, որ այդ բարեկարգություններով Կիլիկիայի Հայ եկեղեցին կդառնա կենսունակ։

Հաղբատցիները Լամբրոնացուն դատապարտում էին նաև նրա համար, որ նա հակառակ եկեղեցական Կանոնագրքի, թույլատրել էր երրորդ անգամ ամուսնանալ։ Մինչ այդ հայ եկեղեցին թույլ էր տալիս ամուսնանալ միայն երկրորդ անգամ։ Լամբրոնացին այդ հին, քարացած կարգը խախտեց, նկատի առնելով ազգաբնակչության թույլ աճը։

Որպեսզի իր բարեկարգությունների նշանակությունն ու գործերը ճիշտ ընկալվեն և մարդիկ թյուրիմացությունների մեջ չընկնեն, Լամբրոնացին վերևում քննված մեղադրանքների կապակցությամբ զգուշացնում է Կիլիկիայի և Մեծ Հայքի բնակչությանը, որ ինքը հետևում է մեր հայրերի խելացի գործերին ու լավ ավանդներին, որոնք կյանքի գնով պատրաստ է պաշտպանել, սակայն ինքը միշտ պայքարել և պայքարելու է հնացած, իմաստից դրկված սին սովորությունների դեմ, որոնց կառչած մնում են մի քանի հոգևորականներ և դրանով հավակնություն ունեն իրենց «ավանդապահ» և «ազգասեր» հորջորջելու։

Լավ ըմբռնելով իր ապրած ժամանակի ոգին, արձագանքելով դարի առաջադեմ գաղափարներին, եկեղեցին ժողովրդի հետ սերտ կապելու և կենսունակ դարձնելու նպատակով, նա չէր վարանում խարազանել ժամանակից ետ մնացած, սահմանափակ հայացքների տեր մարդկանց և կյանքի տարբեր մարզերում նկատվող բացասական երևույթները։

Թուղթը վերջանում է Լևոնին ուղղված հետևյալ խորհուրդներով՝ «Յայս զօրացուսցէ Աստուած զձեզ՝ կանգնել զօրէնսն Աստուծոյ ի մէջ պանդուխտ և նժդեհ ժողովոյ ձերոյ և ազգիս, և Աստուծոյ փութալ հաճոյ լինել և մի մարդկան»[27]։ Իսկ ինչ վերաբերում է ձորագետցիներին, ապա նամակի վերջում հեգնում, ծաղրում է նրանց, որ փոխանակ երես առ երես, արիաբար հանդես գալու, վիճելու և իրենց մտքերն ու գաղափարները պաշտպանելու, զբաղվում են օդի մեջ սուր ճոճելով[28]։

Վերջապես իբրև հոգեկան կարողությունները, արժեքավոր գործերը և շիտակ ու ազնիվ վարմունքը հակադրելով ձորագետցիների գործերին, թղթի վերջում Լևոնին գրում է. «...Եւ մեք վասն Ձորոյգետացւոց մախացողացն յեղյվագրութեան՝ յայտ. վի՞ն ոչ ընկըմիմք, այլ զլոյս իմաստիցն մեր յաշտանակ իշխանութեան ձերոյ բարձրացուցեալ յոյս տամք կուրացելոցն, և կոչիմք ի մեր հանապարհն, և ի Քրիստոսին և ի պետս նոցին լուսավորութեան»[29]։

Իր բովանդակությամբ և բնույթով Ներսես Լամբրոնացու այս նամակը հիշեցնում է Ղազար Փարպեցու «Մեղադրութիւն ստախոս աբեղայից» Թուղթը՝ ուղղված Վահան Մամիկոնյանին։ Երկու թղթերում էլ հետամնաց որոշ վանականներ և աբեղաներ, իշխանություն ունեցող երկու խոշոր պետական գործիչների՝ Վահան Մամիկոնյանի և Լևոն Ա-ի առաջ ուզում են մեղադրել իրենց դարերի առաջադիմական գաղափարներին հետևող երկու լուսամիտ գործիչների՝ Ղազար Փարպեցուն և Ներսես Լամբրոնացուն։ Թեպետ Փարպեցու և Լամբրոնացու միջև ընկած է 7 դար, սակայն նրանց վիճակի և Թղթերի մեջ շատ ընդհանուր գծեր ու նմանություններ կան։

---

[26] Նույն տեղում, էջ 239։
[27] Նույն տեղում, էջ 248։
[28] Նույն տեղում, էջ 245—246։
[29] Նույն տեղում, էջ 244—245։

Երբ էմիածնի մի քանի արեղաներ Փարպեցուն «աղանդաւոր» են հայտարարում Վահանի առաջ, ձորագետցիներն էլ Լամբրոնացուն համարում են «խոտորեալ», հույների, լատինների գավանանքին ու ծեսերին հետևող, ուրեմն՝ ոչ ուղիղ հայ-լուսավորչական։ Արեղաները խորշում են Փարպեցուց, որ նա հունասեր է, ունի հունարեն գրքեր և հունական կրթություն. նույն ձևով էլ վերաբերվում են ձորագետցի վանահայրերը Ներսես Լամբրոնացուն։

Նմանություններով հանգերձ այս երկու Թղթերն էլ յուրատիպ, ինքնուրույն են, որոնցից ամեն մեկն արտահայտում է իր դարի տրամադրություններն ու բարքերը։ Այս երկու Թղթերն էլ մի-մի սքանչելի գրական-հրապարակախոսական արձան են հեղինակների համար և միաժամանակ շատ արժեքավոր պատմական փաստաթուղթ։ Սակայն իր անվախ, համարձակ ոգով և բարձր արվեստով Լամբրոնացու Թուղթը բացառիկ կարևոր տեղ ունի մեր միջնադարյան գրականության պատմության մեջ։

Լամբրոնացու Թուղթը գրված է ճարտասանական նուրբ ձևերով և փայլուն պերճաբանությամբ։ Թղթում ավելի աչքի են ընկնում Լամբրոնացու համարձակությունն ու արիությունը, որոնք շատ թույլ են և կամ գրեթե չկան Փարպեցու վերոհիշյալ Թղթում։

Փարպեցին մի տեսակ ընկճված և ստորացած է զգում իրեն. նա Վահանին գրում է. «Եւ ես անպիտանս և ամենեցուն կղկղանք, թեպետ և երևիցիմ առաջի տեառն. առն եղեալ որդի, իբր զանզգամ, որպէս և մեծ առաքեալն Պողոս՝ այլ քո տեառն, քրիստոսանմանութեամբ տարեալ, ներելով անզգամութեանս իմում՝ ընկալ զիս իբրև զանզգամ»[30]։ Մինչդեռ Լամբրոնացին երբեք չի ընկճվել և ցած իջել իր արժանապատվության բարձունքներից։

Համակված համարձակ, առաջադիմական մտքերով ու հայրենասիրությամբ, Լամբրոնացու Թուղթը գրված է ճարտասանական փայլուն ոճով և ամուր տրամաբանությամբ։ Ահա թե ինչու այս մեծարժեք վավերագիրը, որպես միջնադարյան պերճախոսության մի յուրատիպ նմուշ, պատմական նշանակության հետ միաժամանակ ունի նաև գրական-գեղարվեստական մեծ արժեք։

«ПОСЛАНИЕ К АРМЯНСКОМУ ЦАРЮ ЛЕВОНУ II» НЕРСЕСА ЛАМБРОНАЦИ

ГР. А. АКОПЯН
Доктор филологических наук

Резюме

Нерсес Ламбронаци (1153—1198)—известный средневековый писатель и публицист. Передовые мысли и широкий кругозор Ламбронаци не всегда находили соответствующее понимание, вследствие чего он был объявлен «грекофилом», «уклонившимся» в вопросах догматики и т. п. «Армянские ученые северных краев» во главе с Григором Тутеорди написали жалобное письмо Киликийскому царю Левону II. Это обстоятельство и явилось поводом к появлению известного «Послания к царю Левону II», где дан ответ монахам Санаина и Ахпата и в то же время содержится смелая критика несправедливых поступков Левона II. В результате анализа «Послания», выясняется, что спор между Ламбронаци и Тутеорди носит не только личный и даже религиозный характер, как думали некоторые исследователи: этот бурный спор есть проявление борьбы сторонников восточной и западной ориентации, борьбы двух противоположных течений, связанных с религиозной и политической жизнью восточной и западной части армянского народа.

---

30 «Ղազարայ Փարպեցւոյ, Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 410։